ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 06.06.2019թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ԳԲՔԱ-LO-2019/26

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի

Քարտուղարությամբ՝ Ռ. Մկրտչյանի

Մասնակցությամբ՝

Բողոքաբեր՝ «Հույս Մոտոր» ՍՊԸ-ի տնօրեն Հ. Հովակիմյանի

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ քննության առնելով «Հույս Մոտոր» ՍՊԸ-ի (այսուհետ՝ նաև Ընկերություն) կողմից 07.05.2019թ. ներկայացրած բողոքը (այսուհետ՝ նաև Բողոք) և կից փաստաթղթերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. <u>Գործի նախապատմությունը</u>

Դիմելով ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ Ընկերությունը ներկայացրած բողոքով խնդրել է ՀՀ պաշտպանության նախարարության գնահատման հանձնաժողովին՝

1. Արգելել պայմանագիր կնքել 16, 23, 26, 28-րդ չափաբաժիններով «Արպանիվ» ՍՊԸ-ի հետ:

2. Պարտավորեցնել վերանայել 2019թ ապրիլի 29-ին պայմանագիր կնքելու մասին որոշումը վերականգնելով «Հույս Մոտոր»-ի կողմից շահած չափաբաժինների մասով, այն է 16,23,26,28-րդ չափաբաժինները մատակարարման պայմանագրի կնքման գործընթացը:

Բողոքներ քննող անձի 07.05.2019թ. որոշմամբ բողոքը ընդունվել է վարույթ և 15.05.2019թ. և 24.05.2019թ.-ին նշանակվել են նիստեր:

Բողոքի քննությունն ավարտվել է 24.05.2019թ. և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 06.06.2019թ.:

2. «Հույս Մոտոր» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.

«Հույս Մոտոր» ՍՊԸ-ն ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

«ՀՀ Պաշտպանության Նախարարությունը 27.02.2019 հայտարարել է ՀՀ ՊՆ ՆՏԱԴ- ԲՄԱՊՁԲ-4/1 ծածկագրով բաց մրցույթ, որի գնման առարկա է հանդիսանում ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար անվադողերի և մարտկոցների ձեռքբերումը:

2019թ ապրիլի 29-ին Պաշտպանության Նախարարության ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-4/1 ծածկագրով հայտարարված բաց մրցույթի գնահատող հանձնաժողովը որոշում է կայացրել պայմանագիր կնքելու մասին: Որոշման մեջ նշված է որ գնահաւրող հանձնաժողովը հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման 43-րդ կետի 4-րդ ենթակետը որոշեց մերժել «Հույս Մոտոր» ՍՊԲ-ի հայտը: Վերը նշված որոշումը գտնում եմ անօրինական և անհիմն հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ Պաշտպանության Նախարարության ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-4/1 ծածկագրով հայտարարված բաց մրցույթի գնահատող հանձնաժողովը մերժել է «Հույս Մոտոր» ՍՊԸ -ի հայտը հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017 թվականի համար 526Ն որոշմամբ հաստատված գնումների ընթացակարգի կազմակերպման կարգի 43-րդ կետրի 4-րդ ենթակետը, համաձայն որի հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարը էլեկտրոնային փոստի միջոցով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով ծանուցումն ուղարվելու

օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը:

Սահմանված ժամկետում փաստաթղթեր ընդհանրապես չներկայացվելու դեպքում հանձնաժողովը հայտերի գնահատման նիստում մերժում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցի հայտը և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացնում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

Վերը նշվածից հետևում է, որ «Հույս Մոտոր» ՍՊԸ-ը հայտի մերժման հիմք է համարվել սահմանված ժամկետում փաստաթղթերը չներկայացնելը (հիմք՝ գնահատող հանձնաժողովի 2019 թվականի ապրիլի 29-ի թիվ 1.3 որոշում, գնահատող հանձնաժողովն քարտուղարի 25.04.2019 թվականի ծանուցում հայտը մերժելու վերաբերյալ /ծանուցումը կցվում է):

Ցանկանում եմ նշել, որ «Հույս Մոտոր» ՍՊԸ-ն չի հրաժարվել որակավորման փաստաթղթերը ուղարկելու պարտավորությունից, այլ տեղի է ունեցել տեխնիկական խնդիր, որի արդյունքում փաստաթղթերը ուղարկվել են ապրիլի 22-ի փոխարեն ապրիլի 25-ին:

Տեխնիկական խնդիր է հանդիսանում հանձնաժողովի քարտուղարի ուղարկած էլեկտրոնային նամակի Junkmail-երում հայտնվելը, որի հետ կապված մենք ունենք ապացույցներ (կից ներկայացվում է էլ. փոստից արված 1 ին նկարը):

Այն մասին որ «Հույս Մոտոր» ՍՊԸ-ն զբաղեցրել է 1-ին տեղը 16, 23, 26, 28-րդ չափաբաժիններով տեղեկացել ենք ՀՀ Ֆինանսների նախարարության http://gnumner.am պաշտոնական կայքից, որտեղ ապրիլի 23-ին մուտք անելով մրցույթի ծածկագիրը տեսել ենք հայտերի բացման նիստի արձանագրությունը, որից հետո ուսումնասիրելով «Հույս Մոտոր» ՍՊԸ գնումների համակարգողի Tender&LavAvto.am էլեկտրոնային փոստի «Junkmail» բաժինը հայտնաբերել ենք ՊՆ համապատասխան նամակը: Քանի որ ապրիլի 24-ը հանդիսանում է սգո օր և ոչ աշխատանքային է, ապրիլի 25-ին վաղ առավոտից պատրաստել ենք որակավորման փաստաթղթերը և ուղարկել ենք համապատասխան հասցեով:

Տեղեկացնում ենք նաև որ հանձնաժողովի քարտուղարը «Հույս Մոտոր» ՍՊԸ-ը հայտը մերժելու վերաբերյալ ծանուցումը էլ. փոստով ուղարկել է 25.04.2019 թվականի 18:54, մինչ դեռ «Հույս Մոտոր» ՍՊԸ-ն որակավորման փաստաթղթերը ուղարկել է

25.04.2019թ. 17:26, այսինքն նախքան հայտը մերժման մասին ծանուցում ստանալը (կից ներկայացվում է էլ. փոստից արված 2 րդ և 3-րդ նկարները):

Նկատի ունենալով, որ «Հույս Մոտոր» ՍՊԸ-ն որակավորման փաստաթղթերը ուղարկել է նախքան մերժման մասին ծանուցումը ստանալը, հետևապես գնահատման հանձնաժողովի պատճառաբանությունը, որ «Հույս Մոտոր» ՍՊԸ-ն ընդհանրապես չի ներկայացրել որակավորման փաստաթղթերը անհիմն են և հետևապես Պաշտպանության Նախարարության 2019թ ապրիլի 29-ին ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-4/1 ծածկագրով հայտարարված բաց մրցույթի գնահատող հանձնաժողովի թիվ 1.3 որոշումը անօրինական է և անհիմն:

Նաև ուզում եմ հայտնել, որ ֆորմալ պայմանով «Հույս Մոտոր» ՍՊ Ընկերությանը ՀՀ Պաշտպանության Նախարարության ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-4/1 ծածկագրով հայտարարված բաց մրցույթի գնահատող հանձնաժողովի կողմից որպես վերը նշված չափաբաժիններով հաղթող չճանաչելը բերում է մի շարք անցանկալի հետևանքների, այն է՝ ինչպես ՀՀ պետական բյուջեի ավելացած ծախսերի մասով, այնպես էլ առողջ մրցակցային դաշտի փլուզմամբ և մեր գործարար համբավի վրա սպվերի գցմամբ:

Վերը նշված չափաբաժիններով որպես առաջին տեղ զբաղեցրած ճանաչված «Հույս Մոտոր» ՍՊ Ընկերության կողմից առաջարկվող ապրանքների մատակարարման գինը կազմում է 1.769.200 ՀՀ դրամ, (ներառյալ ԱԱՀ), իսկ երկրորդ տեղ զբաղեցրած ճանաչված կազմակերպության առաջարկած գինը կազմել է 2.627.080 ՀՀ դրամ, (ներառյալ ԱԱՀ), այսինքն բյուջեի ծախսը վերը նշված չափաբաժիններով ավելանում է 50 տոկոսից ավելի, այն է՝ 857.880 ՀՀ դրամով (ներառյալ ԱԱՀ):»:

Ելնելով վերոնգրյալներից, «Հույս Մոտոր» ՍՊԸ-ն Բողոքներ քննող անձից խնդրել է ՀՀ Պաշտպանության Նախարարության գնահատման հանձնաժողովին արգելել պայմանագիր կնքել 16, 23, 26, 28-րդ չափաբաժիններով «Արպանիվ» ՍՊԸ-ի հետ և պարտավորեցնել վերանայել 2019թ ապրիլի 29 -ին պայմանագիր կնքելու մասին որոշումը վերականգնելով «Հույս Մոտոր»-ի կողմից շահած չափաբաժինների մասով, այն է 16,23,26,28 չափաբաժինները մատակարարման պայմանագրի կնքման գործընթացը:

3. <u>ՀՀ պաշտպանության նախարարության կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստարկները, հիմնավորումները և դիրքորոշումը</u>.

Բողոքներ քննող անձը 14.05.2019թ. գրությամբ դիմել է Պաշտպանության նախարարությանը՝ հնարավորություն տալով «Հույս Մոտոր» ՍՊԸ-ի կողմից 07.05.2019թ. ներկայացված բողոքի վերաբերյալ ներկայացնել Պատվիրատուի գրավոր կարծիքը:

Ներկայացված դիրքորոշմամբ Պատվիրատուն հայտնել է հետևյալը.

«Ի պատասխան Ձեր 14.05.19թ. թիվ 1/ԲՔԱ-ԼՕ/1/7886-2019 գրության, հայտնում եմ, որ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-4/1» ծածկագրով բաց մրցույթի 16-րդ, 23-րդ, 26-րդ և 28-րդ չափաբաժինների մասով «Հույս-Մոտոր» ՍՊԸ-ն գնահատող հանձնաժողովի կողմից ճանաչվել էր 1-ին տեղ զբաղեցնող մասնակից: Սահմանված կարգով վերոնշյալ մասնակցին armeps համակարգի միջոցով ոչ ավտոմատ եղանակով ծանուցվել է երեք (3) աշխատանքային օրվա ընթացքում որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը ներկայացնելու վերաբերյալ: Սահմանված ժամկետում «Հույս-Մոտոր» ՍՊԸ-ն ընդհանրապես փաստաթղթեր չի ներկայացրել, ուստի գնահատող հանձնաժողովը, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետը մերժել է «Հույս-Մոտոր» ՍՊԸ-ի հայտը:»:

Կից ներկայացվել են վերը «Հույս-Մոտոր» ՍՊԸ-ի վերաբերյալ անհրաժեշտ փաստաթղթերը:

4. <u>ԳԲՔԱ-ԼՕ-2019/26 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

Սույն գործի փաստերի համաձայն՝

ՀՀ պաշտպանության նախարարությունը 27.02.2019թ.-ին հայտարարել է «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-4/1» ծածկագրով բաց մրցույթ, որի գնման առարկա է հանդիսանում ՀՀ պաշրպանության նախարարության կարիքների համար անվադողերի և մարտկոցների ձեռքբերումը:

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-4/1» ծածկագրով բաց մրցույթի 16-րդ, 23-րդ, 26-րդ և 28-րդ չափաբաժինների մասով «Հույս-Մոտոր» ՍՊԸ-ն գնահատող հանձնաժողովի կողմից ճանաչվել է 1-ին տեղ զբաղեցնող մասնակից:

«Հույս-Մոտոր» ՍՊԸ-ն մասնակցության հայտի թիվ 3 հավելվածով՝ որակավորման չափանիշների պահանջներին բավարարելու մասին հայտարարությամբ, հայտարարել և

հավաստել է, որ բավարարում է «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-4/1» ծածկագրով բաց մրցույթին սահմանված որակավորման չափանիշների պահանջներին:

Ընկերությունը մասնակցության հայտի թիվ 4 հավելվածով՝ առաջարկվող ապրանքի՝ հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրերին համապատասխանության մասին հայտարարությամբ, հայտարարել և հավաստել է, որ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-4/1» ծածկագրով բաց մրցույթին մասնակցելու նպատակով իր կողմից ներկայացված մասնակցության դիմումում նշված չափաբաժնի (չափաբաժինների) մասով առաջարկվող ապրանքի (ապրանքների) տեխնիկական բնութագրերը համապատասխանում են նույն հրավերի համապատասխան չափաբաժնում (չափաբաժիններում) նշված ապրանքի (ապրանքների) տեխնիկական բնութագրերի պահանջներին:

Նույն հավելվածով «Հույս-Մոտոր» ՍՊԸ-ն պարտավորվել է առաջին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-4/1» ծածկագրով բաց մրցույթի հրավերով սահմանված կարգով և ժամկետներում ներկայացնել իր կողմից առաջարկվող ապրանքի (ապրանքների)՝ անվանումը, ապրանքային նշանը, արտադրողի անվանումը, ծագման երկիրը և տեխնիկական բնութագրերը (ապրանքի ամբողջական նկարագիր):

17.04.2019թ.-ին armeps.am համակարգի միջոցով ոչ ավտոմատ եղանակով Ընկերությունը ծանուցվել է 3 (երեք) աշխատանքային օրվա ընթացքում որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փատաթղթերը ներկայացնելու վերաբերյալ:

Սահմանված ժամկետում «Հույս-Մոտոր» ՍՊԸ-ն ընդհանրապես փաստաղթեր չի ներկայացրել, ուստի գնահատող հանձնաժողովը 2019 թվականի ապրիլի 23-ի թիվ 5 արձանագրությամբ որոշել է մերժել «Հույս-Մոտոր» ՍՊԸ-ի հայտը:

Գնահատող հանձնաժողովի քարտուղարի ուղարկած էլեկտրոնային նամակը հայտնվել է Ընկերության Junkmail-երում:

Գնահատող հանձնաժողովի քարտուղարը «Հույս Մոտոր» ՍՊԸ-ը հայտը մերժելու վերաբերյալ ծանուցումն էլ. փոստով ուղարկել է 25.04 2019թ.-ի ժամը 18:54-ին:

«Հույս Մոտոր» ՍՊԸ-ն որակավորման փաստաթղթերը ուղարկել է 25.04.2019թ.-ի (5-րդ (հինգերորդ) աշխատանքային օրը) ժամը 17:26-ին՝ նախքան հայտը մերժելու մասին ծանուցում ստանալը:

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակացությանը, որ «Հույս Մոտոր» ՍՊԸ-ի կողմից 07.05.2019թ. ներկայացված բողոքն անհիմն է, ենթակա է ամբողջությամբ մերժման, հետևյալ պատճառաբանությամբ.

Այսպես՝

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ նաև Օրենք) 3-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի համաձայն.

1. Սույն օրենքի նպատակն է ապահովել գնումների գործընթացում հատուցման դիմաց արժեք, այն է՝

1) պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերում՝ համարժեք հատուցմամբ.

2) գնումների և գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացում:

2. Գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:

Օրենքի 34-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը որոշվում է բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով:

Վերոնշյալ հոդվածների վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը, փաստում է, որ գնումների օրենսդրությունը, հիմնվելով գնման գործընթացի մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային, ոչ խտրական, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարության սկզբունքների վրա, նպատակ է հետապնդում ապահովելու գնումների գործընթացում հատուցման դիմաց պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերումը՝ համարժեք հատուցմամբ, և որ ամենակարևորն է՝ գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացման ապահովումը:

Ինչպես նաև, Բողոքներ քննող անձը հարկ է համարում հավելել, որ վերոնշյալ սկզբունքների ապահովումն ու իրականացումը գնումների օրենսդրության շրջանակներում իրացնելու համար, անհրաժեշտ պայման է նաև ցանկացած անձի՝ գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք ունենալու սկզբունքը՝ անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերության համաձայն՝ մասնակիցը հայտով ներկայացնում է ... ապրանքների գնման դեպքում իր կողմից հաստատված հայտարարություն՝ առաջարկվող ապրանքի՝ հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրերին համապատասխանության վերաբերյալ՝ պայմանով, որ առաջին տեղն զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում հրավերով սահմանված կարգով ներկայացնում է ապրանքի տեխնիկական բնութագրերը, իսկ հրավերով նախատեսված դեպքերում նաև առաջարկվող ապրանքային նշանը, արտադրողի անվանումը, ծագման երկիրը (այսուհետ՝ ապրանքի ամբողջական նկարագիր):

Կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտից հետո ոչ ուշ քան հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարը էլեկտրոնային փոստի միջոցով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝

առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, բացառությամբ սույն կարգով նախատեսված դեպքերի, ապրանքների գնման դեպքում նաև սույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթուղթը, իսկ բանկային երաշխիքի ձևով ներկայացված հայտի ապահովման բնօրինակը՝ կից գրությամբ: Սույն մասով սահմանված ժամկետում փաստաթղթեր ընդհանրապես չներկայացվելու դեպքում հանձնաժողովը հայտերի գնահատման նիստում մերժում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցի հայտը և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացնում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

Հրավերի 2.4 կետի համաձայն՝ մասնակիցը հայտով ներկայացնում է իր կողմից հաստատված հայտարարություն՝ առաջարկվող ապրանքի՝ հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրերին համապատասխանության վերաբերյալ, պայմանով, որ եթե մասնակիցը ճանաչվում է առաջին տեղը զբաղեցրած մասնակից, ապա սույն հրավերով սահմանված կարգով և ժամկետում հանձնաժողովին է ներկայացնում իր կողմից հաստատված՝ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը՝ համաձայն հավելված N 4-ի:

Վերոնշյալ իրավակարգավորումների վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը հանգում է այն հետևության, որ հայտերի բացման նիստի ավարտից հետո էլեկտրոնային փոստի միջոցով ծանուցված առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից սահմանված ժամկետում փաստաթղթեր ընդհանրապես չներկայացվելու դեպքում հանձնաժողովը հայտերի գնահատման նիստում մերժում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցի հայտը և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացնում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

Ընդ որում, Բողոքներ քննող անձը փաստում է, որ մասնակիցը պարտավոր է ապրանքների գնման դեպքում ներկայացնել՝ իր կողմից հաստատված հայտարարություն առաջարկվող ապրանքի հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրերին համապատասխանության վերաբերյալ: Եվ եթե Հայտարարությունը որակվի որպես իրականությանը չհամապատասխանող կամ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չներկայացնի հրավերով նախատեսված փաստաթղթերը (ապրանքի տեխնիկական բնութագրերը), ապա այդ հանգամանքը

համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորության խախտում:

Սույն գործի փաստերի հիման վրա, Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ 17.04.2019թ.-ին armeps.am համակարգի միջոցով ոչ ավտոմատ եղանակով Ընկերությունը ծանուցվել է 3 (երեք) աշխատանքային օրվա ընթացքում որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փատաթղթերը ներկայացնելու վերաբերյալ:

Սահմանված ժամկետում «Հույս-Մոտոր» ՍՊԸ-ն ընդհանրապես փաստաղթեր չի ներկայացրել, ուստի գնահատող հանձնաժողովը 2019 թվականի ապրիլի 23-ի թիվ 5 արձանագրությամբ, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետը, որոշել է մերժել «Հույս-Մոտոր» ՍՊԸ-ի հայտը, քանի որ «Հույս Մոտոր» ՍՊԸ-ն որակավորման փաստաթղթերը ուղարկել է ապրիլի 25-ին՝ 5-րդ (հինգերորդ) աշխատանքային օրը:

Ինչ վերաբերում է Ընկերության կողմից նշած այն հանգամանքներին, համաձայն որոնց գնահատող հանձնաժողովի քարտուղարի ուղարկած էլեկտրոնային նամակը հայտնվել է Ընկերության Junkmail-երում և որ «Հույս Մոտոր» ՍՊԸ-ը հայտը մերժելու վերաբերյալ ծանուցումը էլ. փոստով ուղարկվել է 25.04.2019թ.-ի ժամը 18:54-ին, այն դեպքում երբ «Հույս Մոտոր» ՍՊԸ-ն որակավորման փաստաթղթերը ուղարկել է 25.04.2019թ.-ի ժամը 17:26-ին՝ նախքան հայտը մերժելու մասին ծանուցում ստանալը, ապա Բողոքներ քննող անձը հարկ է համարում փաստել, որ 43-րդ կետի 4-րդ ենթակետի կարգավորումից հստակ է, որ ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը (ապրանքի տեխնիկական բնութագրերը) ընդհանրապես չներկայացվելու դեպքում հանձնաժողովը հայտերի գնահատման նիստում մերժում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցի հայտը:

Վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում՝ Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ «Հույս Մոտոր» ՍՊԸ-ն հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չներկայացնելով հրավերով նախատեսված փաստաթղթերը, խախտել է Կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետով և Հրավերի 2.4 կետով սահմանված պահանջները:

Ուստի, տվյալ պարագայում, գնահատող հանձնաժողովի կողմից մասնակցի հայտը մերժելու մասին որոշումն իրավաչափ է և բխում է գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջներից:

Ելնելով վերոգրյալից՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը

Ո Ր Ո Շ Ե Ց

«Հույս Մոտոր» ՍՊԸ-ի կողմից 07.05.2019թ.-ին ներկայացրած բողոքն մերժել ամբողջությամբ՝ անհիմն լինելու պատճառաբանությամբ:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝

ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ